

ARCHIVE COPY

Please return.



Հրատարակութիւն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի
A Publication of the Prelacy of the Armenian Apostolic Church of America

Volume IX, Number 11
March 1987

Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԾԱՇԿԵՐՈՅԹ


Վերելքի մէջ է Ամերիկահայ գաղութը: Եկեղեցական եւ ազգային կեդրոններ կը շինուին ու կը վերածաղկիւն ամէնուրեք եւ հայուիւնը կը սնանի իր արձանագրած յաջողութեանց խանդավառութեամբ: Այս իմաստով՝ տարբեր եւ իւրայատուկ նկարագիր ունէր Փետրուար 7, 1987-ի ձեռնարկը: Ժամանակէ մը ի վեր Ամերիկահայ գաղութը հետաքրքրութեամբ կը հետեւէր շրջան ընող այն լուրին թէ՛ Ֆլորիտայի մէջ, շքեղօրէն պիտի կանգնի «Ս. Կարապետ վանք» անուանով ազգային, կրօնական, մշակութային կեդրոն մը:

Շաբաթ 7 Փետրուար 1987-ը հետեւաբար եղաւ պատմական օր մը, մասնաւորաբար Ֆլորիտահայութեան համար: Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան նահանգներու եւ Գանատայի Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աճեանի Պրն. Զօհրապ Թագեանի կողմէ:

Պրն. Զօհրապ Թագեանի կողմէ: Պանդավառութեան այս մթնոլորտին մէջ, Սրբազան Հայրը շարունակեց իր խօսքը, եւ գնահատանքի իր խօսքը ուղղելէ ետք Տիկ. Շըրլի Սողանալեանին, յայտնեց՝ թէ Սարգիս Սողանալեան իր այս ոգին եւ ներշնչումը կը պարտի իր մօր՝ Տիկ. Մարիճա Սողանալեանին, որ յաջողած էր մաքուր հայու եւ բարեսէր մարդու սերմերը ցանել իր զաւկին հոգիին մէջ, եւ ընդհանուր ուրախութեան մէջ յայտարարեց, թէ հանգստեան տունը պիտի կոչուի Մարիճա Սողանալեանի անուան: Նոյնքան խանդավառութեան մէջ, Սրբազան Հայրը, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հօր՝ Ն:Ս:Օ:Տ:Տ: Գարեգին Բ. Կաթողիկոսին, Տիկին Մարիճա Սողանալեանը պատուեց Կիլիկիան Իշխանուհիի շքանշանով:

Տիկին Սողանալեան, խորապէս զգացուած, մայրական քանի մը անուշ խօսքերով, իր շնորհակալութիւնը յայտնեց իրեն եղած պատուին համար:

Ապա, ծափող յոյններով բեմ բարձրացաւ Պրն. Սարգիս Սողանալեանը, որ պարզ ու անպաճոյճ բառերով յայտնեց թէ ինք ուրախ է, որ առիթը ունի իր ազգին տալու այն՝ ինչ որ ստացած էր ազգէն ու մօրմէն: Պատմեց թէ ինչպէս, երբ Պէյրուսի մէջ հաց կ'ուտէին, իր մայրը քանի մը պնակ կը պատրաստէր եւ կը յանձնէր իրեն, որպէսզի տանի եւ բաժնէ ծանօթ եւ կարիքաւոր դրացիներուն, բարեկամներուն: Այս կիսելու ազնիւ ոգին ստացայ մօրմէս, եւ կը ջանամ կիրարկել կեանքիս մէջ: Ապա աւելցուց՝ ես ու ընտանիքս չենք ուզեր մենաշնորհի վերածել Ս. Կարապետը: Զեղմէ ամէն մէկը պէտք է մասնակցի, քար մը դնէ այս շէնքին մէջ: Շաբաթը տուար մը, ամիսը տուար մը, տարին մէկ տուար: Բայց տուէ՛ք, եւ մա՛ս կազմեցէք: Ամենէն անուշ բանն է: Ներկայները խանդավառութեամբ ողջուեցին Պրն. Սողանալեանի սրտի խօսքը, որմէ ետք սրտաբուխ կերպով իրենց նուէրները յանձնեցին շրջանի հոգաբարձութեան:



Պրն. Սողանալեան կը պատմէ իր մանկութեան յուշերէն, յուզելով ներկաները իր պարզ եւ սրտամտիկ խօսքերով:

հրաւերով եւ Ֆլորիտայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմակերպչութեամբ, «Ս. Կարապետ վանք» շինութեան ի նպաստ կազմակերպուած էր ճաշկերոյթ մը, Ֆորթ Լոտրըրտէյլ քաղաքի Էմպրսի Սուիթ պանդոկի շքեղ ճաշարանին մէջ: Զեռնարկին կը նախագահէին Տէր եւ Տիկին Սարգիս Սողանալեաններ: Տօթթ. Րիչըրտ Պերճեանի՝ սեղանապետութեամբ սկսաւ օրուան յայտագրի գործադրութիւնը:

Ճաշկերոյթի ընթացքին Սրբազան Հայրը ներկայացուց վանքին ծրագիրը, եւ քարտէզին վրայ բացատրեց կառուցիւն բաժինները: 10 արտավար հողամասի վրայ, պիտի կառուցուին հետեւեալ հաստատութիւնները. —

- 1. Եկեղեցին: 2. Հովուատուն Վանքը: 3: 150 ծերունիներու համար հանգստեան տուն՝ երեք յարկի վրայ: 4. 10 յարկաբաժին տուններ, առանձին բնակութեան համար: 5. Մարզա-մշակութային կեդրոն՝ որ պիտի ունենայ դպրոց, գրադարան, սրահ եւ այլն: 6. Պասէթիպոլի, ֆութպոլի եւ թենիսի դաշտեր: 7. Զիարարան:

Եկեղեցւոյ կողքին, համալիրը պիտի ունենայ կարգ մը շինութիւններ՝ որոնք աղբիւր պիտի ըլլան ներշնչումի: Այսպէս հողամասին վրայ պիտի շինուի արուեստական լիճ մը՝ Վանայ լճին ձեւով, եւ Աղթամար կղզիին նմանութեամբ կղզեակի մը վրայ պիտի բարձրանայ նահատակաց յուշարձանը: Իսկ հողամասի 4 տարբեր անկիւններուն պիտի կանգնուի չորս աղբիւր յուշարձաններ՝ ի յիշատակ 4 քաղաքներու, որոնց ժողովուրդը 1915-ին հերոսաբար պաշտպանեց ինքզինք եւ փրկեց հայութեան պատիւը: Չորս աղբիւրները պիտի կառուցուին՝ Մուսա Տաղի, Հաճընի, Վանի եւ Նապին Գարահիսարի անուններով: Թէ՛ նահատակաց յուշարձանը, թէ՛ աղբիւրները մրցոյթի պիտի դրուին, եւ արուեստագէտներ պիտի հրահրուին իրենց մասնակցութիւնը բերելու սոյն մրցանքին: Ժողովուրդը ուշի ուշով հետեւելէ ետք Սրբազան Հօր բացատրութեանց մօտեցաւ եւ դիտեց քարտէսը, որ պատրաստուած էր ինտիանայէն՝



Մայր մարիճա Սողանալեան կը ստանայ Կիլիկեան Իշխանուհիի շքանշանը: Առաջնորդ Սրբազան Հօր կողքին՝ Տիկին Շըրլի Սողանալեան եւ Պրն. Կարո Սողանալեան:

Օրուան հանդիսութեան պաշտօնական բաժինը հասած էր իր աւարտին: Բարձր. Մեսրոպ Արք., աղօթքով փակեց հանդիսութիւնը եւ ներկայներ միասնաբար երգեցին «Կիլիկիա»-ն:

Հողի գնման աշխատանքները աւարտեցան երեք-չորս 10 Փետրուարին, եւ Տիրոջ կամքով, անհրաժեշտ փոփոխութիւնները պիտի կատարուին տեղւոյն շէնքին վրայ եւ Ապրիլ 12-ին, Ծաղկազարդի օրը, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի օծէ առժամայ խորանը, եւ յետ այնորիկ Ս. Պատարագը պիտի մատուցուի այնտեղ:

THE ORDINATION OF REV. FATHER NERCESS MANOUGIAN

The St. Illuminator's Armenian Apostolic Cathedral of New York witnessed, during the weekend of Feb. 21 and 22, 1987 the ordination and anointment of Rev. Father Nercess Manougian.



Նորընծայ Տ. Ներսէս Բախանայ կուսայ իր անդրանիկ օրհնութիւնը:

The service of the "Calling of the Priesthood" of Archdeacon Haroutune Manougian was held Saturday, Feb. 21 right after the Vespers service. The service of "Ordination and Anointing" was held on Sunday February 22, during Divine Liturgy which was offered by His Eminence Archbishop Mesrob Ashjian. The altar was served by Very Rev. Anoushavan Tanielian and Very Rev. Nareg Alyemzean, Archpriest Moushegh Der Kaloustian, Archdeacon Hagop Tutelian and Sevag Kendirjian. The divine Liturgy came to a halt just before the reading of the lesson of the day and the service of Ordination began. The candidate climbed the steps of the altar on his knees while the sponsor and his aides were reading Ps. 122 "I was glad..." Then the candidate was escorted to the Prelate. Then, after more questions, the Archbishop blessed the candidate who then was turned toward the west, facing the congregation, and in a gesture of renunciation of worldly things, he raised his hands to the sides of his head. Then after the canonical prayers and the vesting, Surpazan took the dove and after chanting the hymn to the Holy Spirit, anointed the forehead of the candidate saying: "Blessed and anointed and sanctified be the forehead of Der Nercess Kahana." After the anointing and naming, the Archbishop gave to the newly ordained priest the chalice with the wine and the bread saying: "Receive and accept the authority and ability from the Holy Spirit, to celebrate the sacrifice in the name of our Lord Jesus Christ, for the living and for the dead."

Then the Prelate delivered his sermon based on Ezek. 3:17, "Son of Man, I have made thee a watchman unto the House of Israel... If thou givest him not warning... his blood will I require at thine hand." The Prelate spoke about the calling of the Priesthood in the Armenian Church, how great and important is the role of the priest as a watchman, as a pastor and as a Father to the community and ended his sermon with two remarks: (1) If you see injustice, war and death and also the kind of tragedy in this life and in the society — look always to Christ and His cross, and see the cross as the sign of glory and salvation. (2) Today is a happy day in your life. Many will come and greet you, kiss you, congratulate you, make you feel happy, but don't forget that the same people who shouted "Hosanna" to our Lord, after a few days shouted "Crucify Him." Feel happy when you hear the "Hosanna" shouts but be ready for the shouts of "Crucify Him." Be not afraid and consider all of them your brothers and your people because they are yours

(Cont. on page 2)



ANOOSHIG VARTAN

Where did my last letter end? Ah yes, we left off just after "Havadamk" the recitation of the Creed. I believe we stopped at the end of section two, my arbitrary arrangement. So, to continue,

Third, if the Bible lesson of the day is not read, you have been standing for a while. You may be seated after the recitation of the Creed because what follows is actually a link between part two of the service and the Holy Eucharist "Poon Badarak," the transposing of the bread and wine to the Body and Blood of Christ.

You cannot miss the beginning of the "Poon Badarak" because the celebrant priest removes his crown and takes off his sandals or slippers. If the celebrant is a bishop, the parts of his vestments denoting authority are removed with the crown and slippers as a sign of humility.

There are times throughout the "Sourp Badarak" when kneeling is desirable but it seems that most people, especially men, prefer to stand. Hence, from the beginning of "poon Badarak" when the deacon sings "Mi vok herakhayits..." until the end of "hoki Asdoosö..." the parishioners remain standing. When the choir finishes singing "hanko zhokis mer nunchetslots..." the congregation is seated.

Fourth, as you know, we rise and stand as a sign of respect. When the celebrant priest begins praying for the present clergy, "Yevus aravel zaeisgobosabedn mer..." the Catholicos and the Prelate, we stand until he finishes his prayer. Personally, I would prefer to rise just before the priest's prayer when the deacon prays for all believers, "unthanoor amenayn havadatselots..." In my opinion, however humble, those who sacrificed their lives for Christ deserve to be respected. Actually, we are only talking about a few seconds. Soon after the priest blesses the congregation they may be seated.

Fifth, I have to refer back to my earlier advice about the use of common sense. Here now is a segment which our forefathers have so wisely arranged. If you are able to follow the words, you will realize that there is a sort of dialogue between the deacon and soloist. The section, "Amen, yet unt hokvooyt koom" gives the celebrant priest an opportunity to reflect on the Gospel reading of the day or the sermon he intends to give. The parishioners are seated for the sermon.

Sixth, following the sermon and the announcements all rise again for the "Hayr Mer," (which I am certain you recognize as the Lord's Prayer), standing just a short while. After the celebrant priest says "Ee surpootyoon surpots" (for the holiest of the holy) all are seated again.

Seventh, the final standing segment occurs when the choir sings "Orhnyal eh Asdvads..." This is a joyful hymn for now the transposition is complete and the congregation is reminded, encouraged and told to partake of the "Communion." Listen to the words "Jashagetsek yev desek zi kaghtsr eh Der."

You see, in the old days, centuries ago, Armenians used the "Grahpah" (classical Armenian) as the spoken language in their everyday life; therefore the advice, the encouragement or affirmation was easily understood by the congregation.

I have observed, and perhaps you have noticed also, the fact that some members of the congregation sing along with everyone's part — even that of the celebrant priest. However, this is not correct. The congregation may join together in singing only when the choir sings.

I am certain there are other questions to discuss as well as comments and suggestions you might want to make. You are welcome to do so by writing to OUTREACH also. You may be assured that your comments about any aspect of "Soorp Badarak" and the Armenian church will be answered.

Now, I hope you have been enlightened a little. And, please remember, I look forward to hearing from you and have your voice your opinions at any time; so write to,

Your loving
Eugenie Horkoor

ՊԱՀՔԻ ԳԵՐԸ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Մեծ Պահոց մէջ ենք. ուստի յարմար պիտի ըլլար որ մեր այսօրուան կրօնական զրոյցը նուիրէինք պահքի գաղափարին:

Շատ հին ժամանակներէ ի վեր՝ ինչպէս բազմաթիւ ժողովուրդներու մէջ, Հրեաներու մօտ եւս՝ պահեցութիւնը կրօնական սովորութիւններէն մէկն էր եւ կը կիրարկուէր զլիսաւորաբար հետեւեալ պարագաներու մէջ:

1. Կրօնական քացառիկ գործունէութեան մը կամ առաքելութեան մը համար: Մովսէս Մարգարէն՝ Իսրայէլի մեծ առաջնորդը, Սինայ լեռան վրայ քառասուն օր ծոմ պահեց Տասնաբանեայ տախտակները ստանալու համար (Ելից ԼԴ. 28): Նոյնը ըրաւ Դանիէլ Մարգարէն պատրաստելու համար ինքզինքը աստուածային յայտնութեան (Դանիէլ Թ. 3, Ժ. 2):

1. Իբր սուգի արտայայտութիւն: Դաւիթ թագաւոր եւ իր հետեւորդները լացին, սգացին եւ պահք բռնեցին Սաւուղի եւ անոր որդիին Յովնաթանի մահուան վրայ (Բ. Թագ. Ա. 12):

3. Իբր խնայարկութեան, գղջումի եւ անճեղքանքի արարք մը Աստուծոյ հետ հաշտուելու համար: Հրէից Աբաբա թագաւորը՝ երբ զղջաց իր գործած մեղքերուն վրայ՝ պատուեց իր պատմութեանը, բուրձ հազաւ եւ պահք պահեց (Գ. Թագ. ԻԱ. 27):

Պահեցողութիւնը՝ դարերու ընթացքին քրիստոնեայ եկեղեցիներու մէջ ընդհանրացաւ՝ մասնաւոր խորհուրդներու եւ տօներու կապուելով: Այսպէս՝ սկիզբէն իսկ մեղաց արձակում տալէ եւ Անկախութիւնէն առաջ ծոմ պահելը անհրաժեշտ էր: Պոզոս եւ Բառնաբաս ձեռնադրուելէ առաջ ծոմ բռնեցին (Գործք. ԺԳ. 2): Համաձայն «Վարդապետութիւն Երկրօտան Առաքելոց»ի (VII. 4) նախ քան մկրտութիւն, թէ՛ ծիսակատար պաշտօնեան եւ թէ՛ երախան ծոմ մնալու էին: Իսկ հաւատացեալներ ծոմապահութենէ ետք միայն կը հաղորդուէին: Ըստ Հիպպոլիտի տուած տեղեկութեան՝ հաղորդութենէ առաջ պահեցողութիւնը օրէնք դարձաւ Գ. դարուն: Ոեւէ քրիստոնեայ չէր կրնար հաղորդութիւն ստանալ, եթէ կերակուր կերած ըլլար: Դ. եւ Ե. դարերուն Բարսեղի, Ոսկերբանի, Գրիգոր Նազիանցիի, Օգոստինոսի եւ այլոց օրով այս կանոնը աւելի խստիւ գործադրուեցաւ: Այս կարգի սովորութիւններէ յառաջ եկաւ մեծ Տաղաւարներուն, մասնաւոր Ձատիկէն առաջ պահք պահելու կանոնը:

Ձատիկը թէ՛ ամենէն հին եւ թէ՛ հաւատացեալները մեծազոյն յոյսով ու ցնծութեամբ լեցնող տօնն էր: Ուստի եկեղեցին յարմար նկատեց ասոր համար պահք նշանակել: Արդէն Բ. դարուն սկսած էր այդ սովորութիւնը: Տերտուլիանոսի հաղորդած տեղեկութեան համաձայն վեց օր էր պահքը, այսինքն ամբողջ Աւագ Շաբաթը: Դ. դարուն երբ քրիստոնեաները սոսկալի չալածանքի ենթարկուեցան քառասուն օրուան պահեցողութիւնը հաստատուեցաւ հետեւելով Յիսուսի (Մատթ. Դ. 2), Մովսէսի (Ելից ԼԴ. 28) եւ Նոյի (Գ. Թագ. ԺԹ. 8) քառասունօրեայ պահեցողութեանց:

Դ. դարուն բոլոր քրիստոնեաներէն չէր պահանջուէր որ քառասուն օր պահք պահէին: Ըստ Ոսկերբանի (Hom. XVI. ad popul Antiochen) շատեր երկու կամ երեք շաբաթ միայն կը պահէին: Պահեցողութիւնը ընդհանրապէս կը կայանար կերակուրէ հրաժարելու մէջ առաւօտէն մինչեւ երեկոյ, կամ օրական մէկ ժամով զոհանալով: Իսկ այդ սնունդը կարելի եղածին չափ պարզ ըլլալու էր: Առաջին դարերուն միայն հացը, ջուրը եւ աղը արտօնուած էին. յետոյ պտուղ եւ հաւկիթ եւս թոյլատրուեցան: Այս առթիւ Հայոց մէջ եղած սովորութեան մասին կը մէջբերենք Յովհան Մանուկեանի սա խօսքերը:

«Այլ եւ կերակրոցն կարմումնն... ումնի լոկով քանջարով, ումնի ընդով միայն շատացան. ումնի սակաւ ինչ հացի, ումնի յոյնպագութեամբ, եւ գանպանոյն քանիկն եւս յաւելու. եւ ումնի գինեհատի միայն, եւ ումնի քանահատի, այլիւ ումնի հացախտի լինին եւ գիպուկ ինչ կերակուրս եւ գիւմահամ բաց է ի բաց հալածնն եւ ուրանան. քայց միով ինչ կերակրովն եւ ոգեպահովն եւեք շատանան, որ միայն գլխնդանութիւնն պահէ, եւ ոչ ի մարմինն եւ ի յարիւնն յաւելու որ գցանկութիւն ախտիցն յուզեն, եւ զայն սակաւ ուտել, սակաւ ըմպել, սակաւ ի փոն լինել, եւ աղօթք անդադար» (Ճառք, էջ 36):

Պահքը կարելի էր լուծել երբ ենթական երախայ մը, ծեր մը կամ հիւանդ մէկը ըլլար: Այսպիսի պարագաներուն եկեղեցին թեթեւ ճաշ կը հրահանգէր:

Պահոց պատմականին վրայ սա նետուած ակնարկով՝ մենք կրնանք նկատել թէ ամէն բանէ առաջ հոգեւոր կեանքի նուիրման եւ ազնուացման շրջան մըն է: Հրաւէր մը սրբութեան, մարդը վերացնելու կեանքի փոռ զգողութենէն, մարմնական տկարութիւններէն եւ կիրքերէն ու

(Շար. էջ 4)

ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆՊԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՕՆԸ

Սրբոց ղեւոնդեանց տօնին առթիւ Ամերիկահայոց Արեւելեան շրջանի եւ Գանատայի թեմէն 18 հոգեւորականներ, զլիսաւորութեամբ թեմակալ Առաջնորդ Բարձ. Տ. Մեսրոպ Ս. Արքեպս. Աչճեանի, միօրեայ հաւաք մը ունեցան Պոսթընի մէջ, հիւրընկալութեամբ Ուիլյամ Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ Հովիւին եւ հոգաբարձութեան:

Փետրուար 23-ի Երկուշաբթին, Պոսթընի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ, երեկոյեան հոգեպարար արարողութիւն մը տեղի ունեցաւ որու յաջորդեց ճաշկերոյթ մը հոգաբարձութեան կողմէ տրուած:

Յանուն հոգաբարձութեան բարի զալուստ մաղթեց Ատենապետ Ասատուր Կիւզէլեան, ինչպէս նաեւ Հոգեւոր Հովիւ Տ. Թորգոմ Ա. Քհնյ. Յակոբեան: Փակման խօսքը տրուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր:



Հայ եկեղեցւոյ սպասարանները Հայ մամուլի քերթիմ մուտքին:

Ճաշկերոյթին հրաւիրուած էին Ս. Ստեփանոս եկեղեցւոյ յարակից մարմիններու վարչութիւնները, Շաբաթօրեայ եւ ամէնօրեայ վարժարաններու ուսուցչական կազմերը, Ազգ. Երեսփոխաններ, Ազգ. Ընդհանուր Ժողովի պատգամաւորներ եւ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ հիմնադիր ազգայիններ:

Փետրուար 24-ի Երեքշաբթի, առաւօտեան եւ յետ միջօրէին Հոգեւորականաց դասը Սրբազան Հօր նախագահութեամբ երկու նիստեր գումարեց եւ քննեց եկեղեցական շարք մը հարցեր:

Օրակարգի վրայ էին դասախօսութիւն մը՝ Խրիմեան Հայրիկի մասին, Արթ. Տ. Մեսրոպ Ա. Քհնյ. Թաշճեանի կողմէ: Յատուկ ծրագիր մշակուեցաւ պատշաճ կերպով նշելու համար Հայրիկի վախճանման ու թխունամեակը:

Ժողովը որոշեց յառաջիկայ Մայիս 24-ին թեմի եկեղեցիներու մէջ Հանդիսապէս նշել Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 10-ամեակը:

Ժողովը որոշեց նաեւ հոգեւորականաց յատուկ Ուղեգիծ մը՝ կրօնական, կրթական, վարչական, պատասխանատուութեանց յատուկ թելադրութիւններ:

Երեկոյեան, Ղեւոնդեանց յիշատակին, Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ յատուկ Ս. Պատարագ մատուցուեցաւ: Պատարագին էր Տ. Ասողիկ Ա. Քհնյ. Գրըճեան:

Գարողեց Տիւրիտայի Հոգեւոր Հովիւ Հոգգ. Տ. Շահէ Վարդ. Փանոսեան: Հաւատացեալներու հոծ բազմութիւն մը ներկայ գտնուեցաւ Պատարագին:

Պատարագի աւարտէն ետք, Ս. Ստեփանոս եկեղեցւոյ Շաբաթօրեայ վարժարանի աշակերտութիւնը խմբական արտասանութիւններով եւ Վարդանանցի ներփողականը պատկերացնող կրօնազգային երգերով հանդէս եկան ներկայ հաւատացեալ ժողովուրդի շնորհ զնահատանքին արժանանալով:

Հոգեւորականաց Դասը, Երեքշաբթի առաւօտ արեւելեան Երկուշաբթուան Հայ Կեդրոնի մէջ գտնուող Ս. Ստեփանոս Ազգային Վարժարան եւ ներկայ գտնուեցաւ դասաւանդութեանց: Ապա խումբը այցելեց «Հայրենիք»ներու շէնքը, եւ մտաւնորդութեամբ Պրն. Գէորգ Տօնապետեանի, այցելեց շէնքի բոլոր բաժինները եւ պատուասիրուեցաւ «շէնքէն»ով:

THE ORDINATION OF REV. FATHER NERCESS MANOUGIAN

(Cont. from page 1)

and you have to cherish them with all your heart, without any discrimination whatsoever. After the sermon, while the Choir chanted "Voghchoin", the greeting of the Kiss of Peace of Christ was proclaimed, the Prelate kissed the forehead and the hands of the newly ordained priest followed by the clergy present. At the end of the Divine Liturgy, the people came and kissed the hands of Der Nercess, congratulated him, after which the Godfather, Mr. Ardavast Avakian washed his hands and forehead.

After the religious ceremonies, a banquet was held in the Pashalian Hall of St. Illuminator's Cathedral, organized by the Ladies' Guild of the Church.

OUTREACH

Archbishop Mesrob Ashjian
Prelate
Mary Hamparian - Editor

OUTREACH (USPS 426-490) is published monthly by the Prelacy of the Armenian Apostolic Church of America, 138 East 39th Street, New York, New York 10016, (212) 689-7810. Unsolicited manuscript will be considered for publication; please include a stamped, self-addressed return envelope. We reserve the right to edit articles in order to conform to space limitations. Signed articles do not necessarily reflect the policy of the Armenian Apostolic Church of America. Send all correspondence to the above address to the attention of the Editor. Printed in the United States of America, Second class postage paid at New York, N.Y. 10016. Postmaster: Send address changes to Outreach, 138 E. 39th St. New York, N.Y. 10016

MR. ARMENAG MARDIROSIAN

PRESIDENT OF EMERSON ARMENIAN HOME FOR AGED OF NEW JERSEY

HONORED

During an emotional testimonial banquet held at Cotillon Hall in Garfield, New Jersey attended by over 500 relatives, friends, and admirers, of Mr. Armenag Mardirosian, the very respected President of the Emerson Armenian Home for the Aged of New Jersey, received the Order of Cilician Knight of the Holy See of Cilicia by His Eminence Archbishop Mesrob Ashjian.

The dinner was organized by the Board of Trustees of the Emerson Armenian Home for the Aged and it was a well deserved testimonial to honor a man who devoted his life to the Armenian Aged.

His Holiness Karekin II, Catholicos of the great House of Cilicia, had issued an encyclical which was read by Archpriest Vahrich Shirinian.

We hereby publish the Armenian text of the Pontifical message.



Archbishop Mesrob Ashjian, Armenag Mardirosian and Archpriest Vahrich Shirinian

Մեզի համար հոգեկան ուրախութիւն պատճառեց տեղեկանալ Ամերիկահայոց Արեւելեան թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպս. Աշճեանէն, Ձեր բազմամեայ եւ բազմաշխատ ծառայութեանց մասին ի սպասաւորութիւն հայ երէց սերունդի պատուական դէմքերուն, հայ ծերերուն եւ ծերունիներուն, մեր բոլորի հայրիկներուն եւ մայրիկներուն, Նիւ Ճորճիի շրջանին մէջ:

Անձամբ ծանօթ ենք էմըրսընի Հայկական Մերանոցին: Մէկէ աւելի անգամներ գտնուած ենք այդ տաք երդիքին տակ, ուր այնքան նուիրումով դուք եւ Ձեզմով գլխաւորուած պաշտօնէութիւնը գործադրող խնամք կը տանիք հոգածութեան կարօտ մեր ժողովուրդի երէց զաւակներուն, որոնք իրենց ուսերուն վրայ կը կրեն տարիներու ծառայութեանց պատուական բեռը:

Դուք, որ հայ ժողովուրդի տառապանքը անձամբ դառնօրէն ճաշակած էք Ձեր մանկութեան օրերուն, Միացեալ Նահանգներու մէջ Ձեր շարքաշ աշխատանքով եւ ձեռներէց, գործնամիտ ոգիով Ձեր սեպհական կեանքը զոհելէ ետք եւ Ձեր ընտանիքին ծառայելով հանդերձ, Ձեր կոչումը նկատեցիք ծառայել անոնց, որոնք կարիքն ունէին հայ ժողովուրդի հոգածութեան: Աստուածաշունչի պատգամը, Տասնաբանեայ օրէնքին մէջ գրուած, «ՊԱՏՈՒԵԱ՛ ԶԶԱՅՐ ՔՈՒ ԵՒ ԶՄԱՅՐ ՔՈ՛» դուք փառաւորապէս արժեցուցիք հայ ազգի հաւաքական կեանքին մէջ հիմը դնելով եւ տարիներու ընթացքին զարգացնելով ու այսօրուան շքեղ հանգրուանին հասցնելով էմըրսընի Հայկական Մերանոցը, որ այնքան լայն տեղ գրաւած է հայ ժողովուրդի, յատկապէս Նիւ Ճորճիի հայ համայնքի զաւակներու սիրտերուն եւ կեանքերուն մէջ:

Քանի՛ քանի՛ հայ հայրեր եւ մայրեր այնտեղ գտան հոգեկան մխիթարութիւն եւ երջանկութիւն, եւ զգացին որ Աստուծոյ սէրը եւ հայ ազգին գուրգուրանքը իրենց հանդէպ՝ շօշափելի եւ բարեգործ իրականութիւն են եւ ոչ թէ միայն խօսք կամ սոսկ զգացում: Այսօր հայ բարեգործութեան գեղաշէն տաճարներէն մէկն է Ձեր ձեռակերտը՝ էմըրսընի Հայ ծերանոցը, որ հայ տարէցներուն համար ովասիս մըն է կեանքի անապատին մէջ:

Ընդառաջելով Ամերիկահայոց Արեւելեան թեմի Առաջնորդ Սրբազանի խնդրանքին, եւ որպէս արդար եւ արժանի վարձատրութիւն, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏԻ ՇՔԱՆՇԱՆ

Ի գնահատութիւն Ձեր ասպետական այն ոգիին, որուն բարիքները կը վայելէ մեր ազգը: Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջաոգջ կեանք երկա՛ր տպիւններով, որպէսզի լիովին վայելէք Ձեր տարիներու զոհողութեանց բարիքները եւ տեսնէք Հայ ժողովուրդի վերածննդեան օրերը:

Ողջ լեռուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ի 11-ն Հոկտեմբերի, 1986 թուին Քրիստոսի

THE PRELACY RAFFLE

The 11th Annual Raffle of the Prelacy Armenian Apostolic Church of America was drawn on Saturday, February 28, 1987 the 7th Paregentan weekend at the Sheraton-Lincoln Inn of Worcester, MA. The following were the winners.

Table with 4 columns: Number, Winner, Location, Amount. Lists names and amounts of raffle winners.

ԲԱՐԵԿԵՆՂԱՆԻ ՇԱԲԱԹԱՎԵՐՁԸ ՈՒՍՏՐԻ ՄԷՁ

Փետրուար 27-28 եւ Մարտ 1-ի շաբաթավերջին, Ուստրի եւ շրջակայից հայ համայնքը ապրեցաւ տօնական եւ յիշատակելի օրեր:

Ազգային Առաջնորդարանի հովանաւորութեամբ եւ Ուստրի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Հովիւին՝ Արթ. Տ. Վազգէն ՔՀՆՅ. Պէքեարեանի, հոգաբարձութեան եւ բարեկենդանի յանձնախումբին կազմակերպութեամբ, բարեկենդանի շաբաթավերջը տեղի ունեցաւ Շէրաթոն պանդոկին մէջ, բազմահարկը հայերու ներկայութեամբ, որոնք մէկտեղուած էին այնտեղ՝ Ուստրէն, Պոսթոնէն, Նիւ Ինկլընտէն, Ֆիլատելֆիայէն, Նիւ Ճորճիէն եւ Նիւ Եորքէն:

ՈՒՐԲԱԹ 27 ՓԵՏՐ. 1987

Ուրբաթ 27 Փետրուարի երեկոյեան ժամը 6:00-ին, արդէն իսկ բացուած յայտարարուած էր Բարեկենդանը: Այդ երեկոյեան տեղի ունեցան զանազան ձեռնարկներ: Առանձին սենեակներու մէջ կը ցուցադրուէին գրքեր, վիտէօ երիզներ: Այնտեղ կային՝ եկեղեցական, մանրանկարչական, գրական, պատմական, երաժշտական եւ զանազան տեսակաւոր հայերէն եւ Անգլերէն գրքեր: Ժողովուրդին ցոյց տրուեցաւ վիտէօ երիզներ: Առանձին սենեակի մը մէջ տեղի կ'ունենար նկարչական ցուցահանդէսը, որուն իրենց մասնակցութիւնը բերած էին՝ Պրն. Պերճ Գայրլեան, Պրն. Ռիչըրտ Թաշճեան, եւ Օրդ. Սոնա Գուլուճեան:

Ուրբաթ երեկոյեան ժամը 8:30-ին, մինչ վերոյիշեալ ձեռնարկները կը շարունակուէին, Շէրաթոնի մեծ սրահներէն մէկուն մէջ տեղի կ'ունենար Պոսթոնի «Կոմիտաս» քառաձայն երգչախումբի համերգը ղեկավարութեամբ՝ Մայսաթրօ Ռուբէն Գրիգորեանի: Ներկայ հասարակութեան հրամցուեցան փունջ մը երգեր, քաղուած հայ երաժշտութեան անսահման դաշտէն: Յայտագիրը սկսաւ «Շէխ Սաֆօ» երգիծական երգով: Յատուկ ուշադրութեան արժանի էր՝ «Բերդիցը Դուրս Ելաւ» երգը, երաժշտութիւն՝ Լեւոն Գրիգորեանի: Յայտագրին գեղեցիկօրէն մենեքզներով իրենց բաժինը բերին՝ Ալիս Նազարեան, Նէնսի Թիւթիւնճեան եւ Տիկ. Անահիտ Չէնկէլեան: Յայտագրի վերջաւորութեան տօնական մթնոլորտի շեշտով մը, երգչախումբը ներկայացուց Չըմըշկաձագի հարսանեկան երգերէն «Աւէք Ենորհաւոր» երգը:

Ժամը 9:00-ին, Բարեկենդանի յատուկ յանձնախումբին նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ հայկական շերմ հիւրասիրութիւն մը՝ համապատասխան խորտիկներու, եւ խմորեղէններու որոնք պատրաստուած էին Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ տիկնաց միութեան կողմէ:

ՇԱԲԱԹ 28 ՓԵՏՐ. 1987

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-ին, Ուստրի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն մը, գիշերային եւ առաւօտեան գոյգ ժամերգութիւններով: Սոյն արարողութիւնը մաս կը կազմէր Բարեկենդանի շաբաթավերջի յայտագրին, եւ նուիրուած էր Կ. Պոլսոյ Տիեզերական Ս. Ժողովի 381 թ. 150 հայրապետներու յիշատակին:

Նախաձաշէն ետք, ներկաները ուղղուեցան պանդոկ, շարունակելու եւ մասնակցելու այդ օրուայ յատուկ յայտագրներուն: Ժամը 1:00-ին ներկայացուեցաւ գաւեշտ մը՝ «Կիրակոս Աղային Ճաշարանը», լիահագազ խնդուք պարգեւեց ներկաներուն: Զաւեշտին յաջորդեց տարազներու ցուցադրութիւնը՝ Ուստրի Կիրակնօրեայ վարժարանի աշակերտութեան կողմէ: 25 մանուկներ հայկական տարազներ հագուած՝ բեմ բարձրացան: Ի՛նչ գեղեցկութիւն, ի՛նչ հայաբոյր մթնոլորտ: Միայն թէ, եթէ... եթէ Երկիր ըլլայինք, ըլլայինք Սարգեղ կամ այլուր, մեր հայ մանուկներուն ամէնօրեայ հագուտը պիտի ըլլային այդ այնքան վառ ու ներդաշնակ գոյներով տարազները, իսկ այժմ կը ցուցադրուէին միայն եւ այնքան կը պատշաճէին հայ մանուկներուն, աւելի անուշիկ, աւելի անմեղ, աւելի հայ կ'երեւէին անոնք:

Տարազներու ցուցադրութենէ ետք, Ֆիլատելֆիոյ «Շարական» երգչախումբը, ղեկավարութեամբ Մանուկ Բանեանի եւ երգերու բացատրութեամբ՝ Անուշաւան Վրդ. Դանիէլեանի, մեղմ եւ քաղցրահունչուն կատարողութեամբ, հասարակութեան ներկայացուց մեր սրբազան եկեղեցական երաժշտութենէ քաղածոյ շարականներու փունջ մը:

Աւելի ուշ Արարատ բարձրացող Համլէթ Ներսիսեան եւ Գրիգոր Բարսեղեան, ժողովուրդին ցոյց տուին Արարատի մագլցումէն առնուած զանազան պատկերներ իրենց բացատրութիւններով: Հետաքրքրական էր մթնոլորտը, Արարատ բարձրացող մը կար սենեակին մէջ. ուրախ էին բոլորը. հայր նուաճած էր Արարատը, բարձրացած էր սրբազան լեռան գագաթը, թէեւ գաղտագողի, սակայն վստահ ու հաստատ այն հաւատքով թէ օր մը, իրենք բոլորով

(Շար. էջ 4)

**NATIONAL FUNERAL SERVICES HELD FOR
ARCHDEACON CARNIG S. PILIGIAN
IN INDIAN ORCHARD, MA**

Carnig S. Piligian, a lifelong devoted member of the Indian Orchard/Springfield, MA, community and 32-year Archdeacon of St. Gregory Armenian Apostolic Church, passed from this life on Sunday morning, February 22, after having suffered a massive heart attack.

Born on May, 1, 1922, Carnig spent most of his life in the service of his beloved church and community as Archdeacon, Board of Trustee member and past chairman, former member of the Armenian Revolutionary Federation and past Gomideh President and delegate to the National Representative Assembly from 1957 to 1978.



Carnig served his country in World War II in the Army Air Corp. He was a devoted family man and recently retired after 17 years as a quality control engineering manager for Digital Equipment Corp.

On the national level, Carnig served his nation as a past member of the Central Committee of the Armenian Revolutionary Federation as well as, more recently, a member of the Armenian Youth Foundation of America, Inc. He served with distinction on the Executive Council of the Prelacy for two terms, and was chairman of that august body from 1978-1980.

In recognition of this exemplary service to the Armenian Church and nation, His Eminence Archbishop Mesrob Ashjian, Prelate of the Armenian Apostolic Church of America in conjunction with the Executive Council, declared that a National Funeral would be performed on Wednesday, February 25, in St. Gregory Armenian Apostolic Church. On that day, the solemn and very impressive funeral services were presided over by His Eminence Archbishop Ashjian. He was assisted by very Rev. Fr. Shahe Vartabed Panosian of Southern Florida and nine other pastors from various parishes throughout New England and New York. The small church was filled to overflowing with family, friends and co-workers who had come from far and near to pay their final respects to this devoted church leader.

A special tribute was offered by the National Delegates and Board of Trustee members currently serving with Carnig as, with lighted candles, they lead the funeral procession into the Church and, in the same way escorted it out.

In his Eulogy, Archbishop Ashjian praised the far-sightedness of this dedicated servant of God as a man who was instrumental in bringing the Prelacy into the computer age by spearheading efforts to obtain a computer system for the Prelacy. At the conclusion of his message, the Archbishop related the story of a church whose custom was, upon the death of one of its members, not to erase the name of the deceased from the membership rolls, but rather to write beside the name: "transferred to membership in the heavenly church."

"There would be no more fitting tribute," exclaimed the Archbishop, "than keeping Carnig's name in the membership book and writing beside it: 'transferred to membership in the heavenly church.'"

Following interment in Oak Grove Cemetery, a memorial dinner or "Hokejash" was held at Andon's restaurant in Springfield.

May our Lord grant eternal rest to the soul of His faithful servant Carnig; may his soul be illuminated in heavenly lights, and may the Holy Spirit comfort his bereaved widow, family, church, Prelacy and all who knew him.

A MOURNER

**Հ Ա Ն Գ Ի Ս Տ
Տ. ՂԵՒՈՆԴ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ
ՓԱՓԱԶԵԱՆԻ**

Վաստակեալ ի սպասարարութիւն սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց քառասնից եւ չորից ամաց, փոխեցաւ առ Աստուած ի յոյսն յաւիտենից յերկրորդում աւուր ամեանն Մարտի:

Տան կարգն հանգուցելոյն կատարեցի ի հինգ Մարտի եօթներորդ ժամու երեկոյեան ի Ս. Յակոբ յեկեղեցւոյ որ ի Մոնթրէալ քաղաքի:

Կարգ վերջին օծման եւ յուղարկաւորութեան կատարեցի ի վեց Մարտի ի ժամու 10:30-ի ի նոյն յեկեղեցւոյ, ձեռամբ թեմակալ Առաջնորդին: Տեառն Մեսրոպայ Ս. Արքեպիսկոպոսի:

Կարգ թաղման՝ ի հանգստարանն Մոնթրէալի:

ԴԻԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
3 Մարտ, 1987

**ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ ՀՈԳԵԼՈՅՍ
Տ. ՂԵՒՈՆԴ Ա. ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆԻ**

Հոգելոյս Տ. Ղեւոնդ Ա. Քահանայ Փափազեան որ ի Տէր հանգեցաւ՝ Երկուշաբթի 2 Մարտին, Մոնթրէալին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան, ծնած էր Սամաթիա, Պոլիս, 22 Յունուար 1911-ին: Մանուկ տարիքին սիրուած էր իր բաղնայնի համար եւ եկեղեցիէ եկեղեցի կը շրջէր, միշտ գնահատուելով եւ սիրուելով բոլորէն: 1926-ին կ'անցնէր Աղեքսանդրիա, եւ կարճ ժամանակ մը յետոյ կը ստանանք տեղւոյն Ս. Պողոս-Պետրոս եկեղեցւոյ դպրապետի պաշտօնը: Ժամանակի ընթացքին կազմած է քառաձայն երգչախումբը, հրապարակ հանած է սալեր եւ իր երգչախումբով հրոյթ ունեցած է պալատան մէջ, Ֆարուք թագաւորի օրով:

Քահանայ ձեռնադրուած է 1943-ին, Եգիպտոսի Առաջնորդ՝ Տ. Մամբրէ Արք. Սիրունեանի կողմէ եւ պաշտօնավարած Ս. Պողոս-Պետրոս եկեղեցւոյ մէջ: 1964 Փետրուար 22-ին, Ամենայն հայոց սայրապետ՝ Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին ստացած էր քահանայական լանջախաչ կրելու իրաւունք: Այդ տարին երէցկոնջ՝ Նուարդին եւ երեք զաւակներուն հետ միասին հաստատուած է Մոնթրէալ, Գանատա, ուր շարունակած է ծառայել Հայց. Ս. Եկեղեցւոյ՝ նախ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ապա Ս. Յակոբ եկեղեցիներուն մէջ: Թէեւ հանգստեան կոչուած էր 1974-ին, սակայն կը շարունակէր հարադրութեանց, թէեւ իր հազաքը ալ կը դաւաճանէր իրեն: 1984 թ. Մայիս 5-ին Աւագութեան պատիւ ստացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին:

Հոգելոյս Տէր Հայրը, հմուտ էր հայ եկեղեցւոյ երաժշտութեան, եւ ունէր անտիպ աշխատութիւններ: Հմուտ էր հաւատաւոր, բառին իսկական առոււծով նուիրեալ զինուորեալ մը Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ:

Լոյս մշտնջենի իր յիշատակին:

ՊԱՀՔԻ ԴԵՐԸ (Շար. էջ 2-էն)

Երկրաւոր անցաւորութենէն՝ դէպի ակելի սերտ յարաբերութիւն մը աստուածային ներկայութեան հետ: Զղջումի, ապաշաւի, ինքնամոխուման եւ հաղթօրի միջոց մըն է, որով արարածը սրտեանդն ինքզինքը կը յանձնէ աստուածային վերանորոգող գորութեան:

Շատերու համար թերեւս այս բառերը խորթ եւ տարօրինակ հնչեն: Գուցէ ուրիշներ ալ ժամանակավրէպ եւ հնամենի քարոզ մը նկատեն զայն: Չխաբենք մենք զմեզ: Ներկայիս աշխարհիս բոլոր ծայրերէն, մարդոց ամենէն գիտակիցները կ'աղաղակեն. «Կորստեան վիհին առջեւ ենք փրկութիւն կ'ուզենք»: Աւետարանը կը պատգամէ. «Եթէ ոչ ապաշխարիցէք ամենեքեան ճոյնալս կորն չիջիք» (Ղուկ. ԺԳ. 5): Դեղը կը բժշկէ մարմինը. ապաշխարութիւնն ու գղջումն են որ պիտի բուժեն մտապած հոգիները, համատարած անձկութեան տանուած խոր դժուրութիւնը: Ինչպիսի՞ իրատեսութեան եւ խոր գղջումի բառերով հրատեւած է Անառակ Որդիին սա խօսքը. «Հա՛յր, մեղայ յերկիմս եւ առաջի բո»: Ապաշխարած, վերանորոգուած, մաքրագործուած հոգիին աղաղակն է այդ: Բայց արդեօք քանի՞նք պիտի կրնային ներքնապէս յերաւիտիւնը, վերադառնալ մեր նման Անառակ Որդիին: Մեր աղօթքն ըլլայ որ շատե՛ր լսեն իրենց պահքի ապաշխարութեամբ երկնաւոր Հօր խօսքը. «Որդի իմ կորստեալ էր եւ գտաւ»: Նոր հայրն է Գ.Ե.Փ.

ՀՈԳԻՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՋԱՊԷԼ ՍԵՐՈՒԲԵԱՆԻ ՄԱՀԸ

Ազգային-հասարակական գործիչ, ՀՕՄ-ի վեթերան անդամ, Ազգային Երեսփոխանուհի Ջապէլ Սերոբեան, որ երկար տարիներ նիւ Եորքի եւ առհասարակ Ամերիկահայ կեանքին մէջ գրաւած էր աչքառու դիրք իբրեւ ղեկավար անձնաւորութիւն, ժահագաւ Երեքշաբթի 3 Մարտ 1987-ին, Նանքըրք, Նիւ Եորք, յետ երկարատեւ հիւանդութեան:



Զապէլ Սերոբեան՝ Հայ կինը ընկերային արդի պայմաններուն ընտելացնող, զայն հանրային եւ համայնքային աշխատանքի մղող՝ առաջին մտաւորական հայուհիներէն էր Ամերիկայի մէջ: Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 8 Մարտին, Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ: Դամբանականներ խօսեցան Բարձր. Տ. Մեսրոպ Ս. Արքեպ. Ալծեան եւ Հայ Օգնութեան Միութեան կողմէ, Տիկին Արփի Պալեան:

Հանգիստ իր վաստակաբեկ ոսկորներուն:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԸՆԲԱԹԱՎԵՐՁԸ

(Շար. էջ 3-էն)



Սրբազան Հայրը, տարազահանդէսիմ մասնակցող մանուկներու հետ միասին

մէկ պիտի բարձրանան սրբազան լերան կատարին եւ աղաղակեն՝ «Ահաւասիկ սրբազան լեռ մենք հասանք, հասանք քու կատարիդ»:

Ժամը 6:00-ին, տեղի ունեցաւ ճաշկերոյթը, աւելի քան 300 ներկաներու մասնակցութեամբ: Ճաշկերոյթին յաջորդեց պարահանդէսը, մասնակցութեամբ Գառնիկ Մխիթարեանի եւ իր նուագախումբի:

Ժամը 11:30-ին տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի տարեկան վիճակահանութիւնը: Կային 15 նուէրներ: Վիճակահանութիւնը վարեց՝ Տօթթ. Վարանդ Յակոբեան, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք ներկաներուն, իր մօտ կանչեց մէկ առ մէկ յարբերող նահանգի գանազան գիւղերէն բերկաւորութիւններ, որոնք պիտի քաշէին բախտաւորութիւնը: Յուզիչ էր պիտի, 92-ամեայ ծերունի մը կը ներկայացնէր՝ Դատեմ, 20-ամեայ պարմանուհի մը իր մօր կողմէ կը ներկայացնէր Ատրեամանը: Մէկ մէկ գանազան սեղաններէ ոտքի կ'ելլէին գիւղեր, քաղաքներ. ամբողջ յարբերող ներկայ էր կարծէք, սակայն ... Բերդակէն եւ Իսմայէլէն ներկայացուցիչներ չկային սրահին մէջ ... ո՞ւր էին ... արդեօք վերագո՞ւն, արդեօք Բերդակէններն ու մնաց միայն ... գուցէ կան Բերդակէններ եւ չեկան այդ օր, հոգ չէ, միայն թէ մեր հայրենի գիւղերու ներկայացուցիչները չպակսին մեր մէջէն:

Բերդակէն ու Իսմայէլը փոխարինուեցան ուրիշ գիւղերով: Իրար քով եկան յարբերողներ, Մեգիլէն, Սօրենիկէն, Նիւսթայիկէն, Հորշէն, Սուրբալէն, Բալուէն, Եղեգիցէն, Քէսիկէն, Բզմաչէն, Զըմըշկաձագէն ներկայացուցիչներ, եւ քաշեցին օրուայ բախտաւորութիւնը:

Շնորհակալութիւն Ազգային Առաջնորդարանին որ 7-րդ Բարեկենդանն ալ յաջողութեամբ պսակեց, եւ վարձքերին կատար Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Վազգէն Քահն. Պէքեարեանին, Հոգաբարձութեան, Բարեկենդանի յանձնարարմանը, Տիկին Ար. Ս. Ար. Երեմիանի, կամուրջ անոնց որոնք Բարեկենդանը եւ յարբերող պարեցուցին ներկաներու սրտերուն մէջ:

Ս.Ս.Ք.